Հայաստան

Հունվար-մարտ, 2023 թ.

ՄԱԿ Փախստականների գործակալության Հայաստանի գրասենյակի նորանշանակ ղեկավար տ-ն Կավիտա Բելանին **հավատարմագրման նամակ** է հանձնել արտաքին գործերի նախարարի տեղակալ պ-ն Վահե Գեւորգյանին: Նրանց հանդիպման ընթացքում քննարկվել են փախստականների, ներքին տեղահանության ենթարկվածների եւ միգրացիայի հարցերում Հայաստանի գերակայությունները եւ ոլորտին առնչվող այլ խնդիրներ:

ՄԱԿ ՓԳՀ-ն ՄԱԿ-ի հայաստանյան թիմի անդամներին հրավիրել էր հանդիպման՝ **Փախստականների վերաբերյալ գլոբալ պայմանագրի** թեմայով: Հանդիպման ընթացքում, որը վարում էին ՄԱԿ-ի մշտական համակարգողի պաշտոնակատար Նիլս Սքոթը եւ ՄԱԿ ՓԳՀ ներկայացուցիչ Կավիտա Բելանին, քննարկվեցին Հայաստանում ՄԱԿ-ի գործակալությունների միջեւ համատեղ գործողությունների ձեռնարկման հեռանկարները:

ՀՀ կառավարությունը սկսել է **Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թթ. գործողությունների ծրագրի** մշակման աշխատանքները: Բազմագործընկերային հանդիպման ժամանակ ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկություններ ներկայացրեց ապաստան հայցողների ընդունման պայմանների բարելավման, սոցիալական աշխատողների կարողությունների զարգացման եւ տեղահանված մարդկանց ինտեգրման վերաբերյալ:

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

354 հեռախոսազանգ

176 անձանց կողմից կատարվել է զանգ ՄԱԿ ՓԳՀ թեժ գծին, որը սպասարկում է ՄԱԿ ՓԳՀ գործընկեր ԿԱԶԱ հիմնադրամը: Մտահոգող հիմնական թեմաները վերաբերում էին ՄԱԿ ՓԳՀ ծառայություններին, ապաստանի ընթացակարգի, առողջապահական ծառայությունների եւ բուժօգնության հասանելիությանը:

2,071 տեղահանված անձի

ՄԱԿ ՓԳՀ գործընկեր «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ն սոցիալական պաշտպանության եւ բարեկեցության ծառայություններ է մատուցել:

85 տեղահանված անձ

ուղղորդվել է մասնագիտացված կառույցներ, ինչպես նաեւ գործերի վարման հարցում օժանդակություն ստացել ՄԱԿ ՓԳՀ գործընկեր Հայկական կարմիր խաչի ընկերությունից:

Մայդա Շավակը Կանանց ռեսուրսային կենտրոնում ոլորտի մասնագետներին է ներկայացնում «Ե՛կ քայլենք» նկարչական ալբոմը: Երեւան, ՀՀ, 2023 թ. հունվարի 20 © ՄԱԿ ՓԳՀ/Անահիտ Հայրապետյան

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ (առ 2023 թ. մարտի 28)



** Հայաստանի դեպքում ֆինանսական պահանջները ներառում են ՄԱԿ ՓԳՀ Հայաստանի գրասենյակի կանոնավոր ծրագրի եւ Ուկրաինայի իրավիճակին արձագանքման պահանջները.*

ՄԱԿ ՓԳՀ ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ* 2022 Թ. ՀՈՒԼԻՍԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ



** Ներառում է փախստականի իրավիճակում գտնվող անձանց*
Աղբյուր՝ ՄԱԿ ՓԳՀ տվյալների որոնման հարթակ

Գործառնական համատեքստ

2022 թվականի վերջին Հայաստանի Հանրապետությունում ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից ծառայություններ ստացող անձանց թիվը շուրջ 36,000 էր, որից մոտ 3,800-ը՝ փախստական, 600-ը՝ ապաստան հայցող, 700-ը՝ քաղաքացիություն չունեցող եւ 31,000-ը՝ փախստականի նման իրավիճակում գտնվող (նշվածների 87%-ը տեղահանվել են Լեռնային Ղարաբաղից, իսկ 13%-ը՝ էթնիկ հայերը, տեղահանվել են Սիրիայից):

2022 թվականին ապաստանի դիմումների թիվը (մոտ 1,000) գերազանցել է վերջին 15 տարիների ցուցանիշը, ապաստան հայցողների ծագման երկրները հիմնականում Իրանը, Իրաքը եւ Ուկրաինան են: 2022 թվականի սեպտեմբերին հայ-ադրբեջանական պետական սահմանին իրադրության սրացման հետեւանքով Հայաստանի երեք մարզերից ներքին տեղահանության ենթարկվեց մոտ 7,600 մարդ: Նույն տարում արձանագրված դրական զարգացումներից էր քաղաքացիություն չունեցող անձանց թվի շուրջ 200-ով կրճատումը:

Ապաստանի իրավական դաշտը եւ ընթացակարգերը, ինչպես նաեւ տեղահանված ու քաղաքացիություն չունեցող անձանց համար աշխատաշուկայի հասանելիության վերաբերյալ կարգավորումները համահունչ են միջազգային չափանիշներին: Եվրոպական միության աջակցությամբ ՀՀ Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությունը ՄԱԿ ՓԳՀ-ի հետ միջազգային պաշտպանության վերաբերյալ օրենսդրության համապարփակ ուսումնասիրություն իրականացրեց: ՀՀ կառավարությունը վերահաստատել է իր հանձնառությունը՝ համագործակցելու միջազգային գործընկերների հետ, բարելավելու ապաստանի իր համակարգը, ինչպես նաեւ իրականացնելու միջազգային պաշտպանության վերաբերյալ օրենսդրության համապարփակ վերլուծություն:

Պաշտպանության հիմնական գործողություններ

- Փետրվարին ՄԱԿ ՓԳՀ-ն մեկնարկեց «Պաշտպանության մշտադիտարկում 2023»-ը՝ «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի հաշվարարների համար վերապատրաստման դասընթացների անցկացմամբ: Պաշտպանության մշտադիտարկումն իրականացվում է ամբողջ երկրի տարածքում, ներառելով ապաստան հայցողներին, փախստականներին եւ փախստականի նման իրավիճակում գտնվող անձանց, որոնք տեղահանվել են Լեռնային Ղարաբաղից:

- Մարտ ամսին ՄԱԿ ՓԳՀ-ն Երեւանում կազմակերպել էր քաղաքացիություն չունեցող անձանց խնդիրների լուծմանն ուղղված Աշխատանքային խմբի (ԱԽ) հանդիպում: Մասնակցում էին մի շարք առանցքային պետական մարմինների ներկայացուցիչներ, այդ թվում Անձնագրերի եւ վիզաների վարչությունից, որոնք ուղղակիորեն զբաղվում են ապաքաղաքացիության դեպքերով, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից, ՄԱԿ ՓԳՀ իրականացնող գործընկերներ եւ անկախ փորձագետներ: ՄԱԿ ՓԳՀ-ն հանգամանորեն ներկայացրեց 2023-2024 թվականների Ապաքաղաքացիության գործողությունների ծրագիրը, որն ուղղված է ապաքաղաքացությանը վերջ դնելուն, ինչպես նաեւ «Ես պատկանո՛ւմ եմ» (#IBELONG)՝ քարոզարշավի առաջընթացը:

ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Վահե Գեւորգյանի հանդիպումը Հայաստանում ՄԱԿ ՓԳՀ նորանշանակ ներկայացուցիչ տ-ն Կավիտա Բելանիին: Մարտի 17, 2023 թ., Երեւան, Հայաստան
© ՀՀ Արտաքին գործերի նախարարություն

Տվյալներ. մարտ, 2023 թվական

178 տեղահանված եւ քաղաքացիություն չունեցող անձ, ըստ խոցելիության աստիճանի, դրամական օգնություն է ստացել, ներառյալ բնակարանների վարձավճարների սուբսիդավորում, բազմանպատակ դրամական հատկացում, դպրոցի վարձավճարի սուբսիդավորում եւ փոխադրավարձի տրամադրում:

322 տեղահանված եւ քաղաքացիություն չունեցող անձ օգտվել են առողջապահական ծառայություններից:

145 տեղահանված եւ քաղաքացիություն չունեցող անձ բուժօգնություն է ստացել:

157 տեղահանված եւ քաղաքացիություն չունեցող անձ իրավաբանական խորհրդատվություն եւ աջակցություն է ստացել:

17 տեղահանված երեխայի եւ գենդերահեն բռնության 14 զոհի դեպքերի վարման մասնագիտական աջակցություն է տրամադրվել:

40 տեղահանված տարեցների եւ հատուկ կարիքներ ունեցող անձանց դեպքերի վարման մասնագիտական աջակցություն է տրամադրվել:

81 տեղահանված եւ քաղաքացիություն չունեցող անձ մասնակցել է խմբային հոգեբանական սեսիաների:

74 տեղահանված եւ քաղաքացիություն չունեցող անձի ոչ դրամական աջակցություն է տրամադրվել, ներառյալ կենցաղային ապրանքներ, սննդամթերք, մանկական սնունդ, հիգիենային պարագաների լրակազմեր եւ հագուստ:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- Փետրվարին ՄԱԿ-ի Փախստականների գործակալությունը կառավարության՝ փախստականների կարգավիճակի սահմանման պատասխանատու մարմինների համար ներքին տեղահանության/տեղափոխման (ռելոկացիա) հայեցակարգի կիրառման չափորոշիչների վերաբերյալ դասընթաց կազմակերպեց: Այս տարվա սկզբին հայեցակարգը կիրառվել է ապաստան տրամադրող մարմնի կողմից՝ մերժելու Իրաքի որոշ քաղաքացիների ներկայացված ապաստանի դիմումները: Հաշվի առնելով նոր ժամանածների թվի շարունակական աճը, ապաստան տրամադրող մարմնի հետ մասնագիտական զարգացման ամենամսյա դասընթացների անցկացման պայմանավորվածություն է ձեռք բերվել, որոնք նվիրված կլինեն ապաստանի ոլորտի առավել բարդ խնդիրներին եւ նախատեսված իրավասության վերաբերյալ որոշում կայացնող աշխատակիցների համար:
- Մարտ ամսվա ընթացքում հարցազրույց է անցկացվել 150 տնային տնտեսությունների/668 անձի հետ, որից 36 տնային տնտեսությունը/114 անձն ապաստան հայցող է, 69 տնային տնտեսություն/389 անհատ՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանված՝ փախստականի նման իրավիճակում գտնվող անձինք, իսկ 45 տնային տնտեսություններ/165 անձ՝ փախստականներ: Հարցազրույցների 95%-ն անցկացվել է առերես, 5%-ը՝ հեռախոսով:
- 2022 թվականին դրամական օգնություն տրամադրելուց հետո ՄԱԿ ՓԳՀ-ն մշտադիտարկում անցկացրեց իր իրականացող գործընկերոջ՝ ԿԱՁԱ հիմնադրամի հետ համատեղ, որը ստանձնել էր տվյալների հավաքագրման պատասխանատվությունը: Արդյունքները ցույց են տալիս, որ մտահոգության ներքո գտնվող անձինք իրենց հիմնական պահանջմունքների, այդ թվում սննդամթերքի, վարձավճարի եւ կոմունալ ծախսերի եւ այլ կարիքների բավարարման համար մեծապես կախված են դրամական օգնությունից:
- Փետրվար ամսին ՄԱԿ ՓԳՀ-ն «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի եւ Հայկական Կարմիր խաչի ընկերության հետ Երեւանում եւ Գորիսում Լեռնային Ղարաբաղից, Սիրիայից, Իրանից, Իրաքից, Ուկրաինայից եւ աֆրիկյան երկրներից տեղահանված եւ ապաստան հայցող անձանց համար (56 մարդ) խորհրդատվական հանդիպումների շարք կազմակերպեց, որի նպատակն էր քննարկել նրանց խնդիրները, կարիքները եւ մտքեր փոխանակել հնարավոր լուծումների վերաբերյալ: ՄԱԿ ՓԳՀ-ն շարունակում է ջանքեր գործադրել տեղահանված մարդկանց նկատմամբ հաշվետվականության երաշխավորման ուղղությամբ՝ ապահովելու նրանց ճշգրիտ եւ ժամանակին տեղեկատվության հասանելիությունը եւ բովանդակային մասնակցությունը ՄԱԿ ՓԳՀ-ի, գործընկերների եւ ծառայություններ մատուցողների հետ խորհրդակցություններին:

Գործընկերային աշխատանք

- Հունվարին ՄԱԿ-ի ՓԳՀ-ն «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցության համաձայնագիր է ստորագրել, որի նպատակն է գենդերով պայմանավորված բռնության կանխարգելման, ռիսկի նվազեցման եւ արձագանքման միջոցով պաշտպանել փախստականների, ապաստան հայցողների, փախստականի նման իրավիճակում գտնվողների եւ քաղաքացիություն չունեցող անձանց անձանց իրավունքները: Ի լրումն, կողմերը պայմանավորվել են համագործակցել իրազեկվածության բարձրացման եւ կարողությունների ձեւավորման աշխատանքներում, որոնց նշանակետը տեղահանված բնակչության համապատասխան խմբերն են, Կառավարությունը եւ համայնքային մարմինները, ինչպես նաեւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն ու երիտասարդները:

- Այս տարվա հունվարին ՄԱԿ ՓԳՀ-ն որպես ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի հաղորդակցության խմբի (ՄԱԿՀԽ) անդամ՝ մասնակցել է առանցքային նախարարությունների խոսնակների, «Հանրային կապերի եւ տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի, Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) եւ ՄԱԿՀԽ ներկայացուցիչների անդրանիկ հանդիպմանը, որը տեղի է ունեցել ՄԱԿ-ի երեւանյան գրասենյակում: Հանդիպման նպատակն էր ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի եւ ՀՀ կառավարության հաղորդակցության մասնագետների ցանց ստեղծել եւ նրանց համագործակցությունը խրախուսել:

- Մարտ ամսին ՄԱԿ ՓԳՀ բազմագործառութային թիմը հանդիպում է ունեցել ՄԱԿ ՓԳՀ-ի աշխատանքային գործընկերների՝ «Մարդը կարիքի մեջ» եւ «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ի հետ: Հանդիպումը նպատակ ուներ քննարկել տեղահանված ընտանիքների եւ հյուրընկալող համայնքների համար նախատեսված ընթացիկ եւ հետագա ծրագրերը, ինչպես նաեւ արտակարգ իրավիճակներին պատրաստվածության աշխատանքները: Իր հերթին ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան թիմը ներկայացրեց մարդասիրական օգնության բնագավառում, մասնավորապես կրթության եւ կենսապահովման ոլորտներում իր եռամյա ռազմավարական առաջնահերթությունները եւ նախատեսված ծրագրերը:

Ֆինանսական տեղեկություններ

2023 թվականին ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակը փորձում է **12.8 միլիոն** ԱՄՆ դոլար հայթայթել՝ փախստականի իրավիճակում գտնվող անձանց կարիքների բավարարման եւ իր ամենամյա ծրագրի ծախսերի փոխհատուցման համար:

ՄԱԿ ՓԳՀ-ն երախտապարտ է Եվրոպական միությանը եւ Ամերիկայի Միացյալ Նահանգներին՝ 2023 թվականին Հայաստանում իրականացվող իր ծրագրերին աջակցելու համար:

ՄԱԿ ՓԳՀ-ն նաեւ շնորհակալություն է հայտնում հետեւյալ դոնոր կառույցներին, որոնք 2023 թ. գլոբալ ծրագրերին առանց նախապայմանների հատկացրել են ավելի քան 10 միլիոն ԱՄՆ դոլար.

Շվեդիա | Նորվեգիա | Նիդերլանդներ | Դանիա | մասնավոր դոնորներ Իսպանիայից | Միացյալ Թագավորություն | մասնավոր դոնորներ Ճապոնիայից | Գերմանիա | Ֆրանսիա | Շվեյցարիա |մասնավոր դոնորներ Կորեայի Հանրապետությունից | մասնավոր դոնորներ ԱՄՆ-ից | Բելգիա | Իռլանդիա | Իտալիա | Ալժիր | Հայաստան | Ադրբեջան | Բուլղարիա | Կանադա | Կոստա Ռիկա | Էստոնիա | Ֆինլանդիա | Իսլանդիա | Քուվեյթ | Լիխտենշտեյն | Լիտվա | Մոնակո | Մոնտենեգրո | Նոր Զելանդիա | Պերու | Ֆիլիպիններ | Քաթար | Կորեայի Հանրապետություն | Սաուդյան Արաբիա | Սինգապուր | Թայլանդ | Թուրքիա | Ուրուգվայ | մասնավոր դոնորներ:

** Առանց նախապայմանների հատկացված միջոցները որեւէ սահմանափակմամբ չկաշկանդված այն գումարներն են, որոնց շնորհիվ ՄԱԿ ՓԳՀ-ն հնարավորություն է ստանում ճկուն կերպով օժանդակելու մտահոգության ներքո գտնվող՝ ծայրահեղ կարիքավոր եւ վտանգված բնակչությանը:*

Մանրամասն տեղեկությունների համար այցելել UNHCR Operational Data Portal եւUNHCR Armenia website, կամ կապ հաստատել **Արամազդ Ղալամքարյանի** հետ, ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի արտաքին կապերի համակարգող, ghalamka@unhcr.org